

«Կլեմէս եպիսկոպոս ծառայ ծառայից Աստուծոյ, Պատուական եղբօր մեր **Քրիզոստոմ** կաթողիկոսի ամենայն Հայոց, ողջոյն եւ առաքելական օրհնութիւն:

Խրատն՝ զոր յԱստուծոյ արդար դատաստանէն՝ աշխարհդ արեւելից ՚ի ժամանակս մեր ընկալաւ, հաւատամք զի առաւել ցաւէ ՚ի սրտի քում, մերձաւոր գոլով երկրին եւ ունկնդիր վշտին եւ չարչարանացն՝ զոր կրեն: Քանզի ե՛ս ողորմութեամբն Աստուծոյ ՚ի հաւատ կաթողիկէ հաստատեալ, վասն այսորիկ ոչ կարես հանդուրժել, այլ արտասուօք սգաս զանարժանութիւն քրիստոնէից: Նաեւ ո՞յք են որք զանուն քրիստոնէութեան ունին եւ քրիստոնէայք են, եւ հանդուրժել կար(ից)են յայդքան անարգութիւն Սրբոյ երկրիդ, որպէս տեսանի՝ այժմ գարշ եւ զազիր պղծութեամբ աղտեղեալ, եւ որ ՚ի նմա սրբութիւնքն՝ որպէս զաղբ անարգ... կոխան տուեալ. հաւատացեալքն Քրիստոսի սպանեալք, եւ նոցին սրովն ջնջեալք: Չոր եւ մեք առանց սաստիկ ցաւոց մերոց՝ ոչ կարենք բերել:...

Ո՛հ. ահա դառն են աւուրքս մեր, յոր սուրբ երկիրն Երուսաղեմի կորեաւ, հաւատացեալքն սպանան, սրբութիւնն կոխան եղեւ. եւ որ ասացեալ է նախ՝ ողբք մարգարէութեանն՝ առ մեզ լցաւ, «Աստուած, մտին հեթանոսք ՚ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո»: Արդ, այս ամենայն ձեզ յայտնի է, եւ առանց ստութեան գիտէք, վասն մերձաւորութեան զաւառիդ. այլ եւ մեք փութացեալ վաղվադակի գտոյն յունկն հաւատացելոց խօսեցաք. որք պատրաստեցան արութեամբ, եւ զան յօգնականութիւն այդմ աշխարհի. անձամբ եւ ընչիւք եւ զինուք՝ դէմ եղեալ զան, համբերել չարչարանաց վասն նորա՝ որ յայդ սուրբ երկիրդ ծնաւ, եւ բազում անարգանաց համբերեաց. եւ ՚ի կատարումն՝ ՚ի նշանակ խայտառակութեան խաչին զմեղս մեր եթող, եւ յանմահ մահուանէն զմեզ ազատեաց: Առ որ եւ յուսամք՝ թէ խրատելովն ուղղէ եւ դարձեալ մխիթարէ. եւ այսու ճանաչին իւրքն, զանարգութիւն Քրիստոսի յինքեանս բերելով. յոր եւ ակն ունիմք, թէ ոչ առանց հաշտութեանն բարկացեալ (է) ժողովրդեանն. վասն զի ՚ի բարկութեանն յիշէ զողորմութիւնն, եւ զկնի լալով երթալոյն՝ խնդրութեամբ դարձուցանէ:

Արդ որպէս եդ Աստուած տնտես եւ հաւատաց ՚ի քեզ զտգէտ ժողովուրդդ, եւ զքեզ եդ ճշմարիտ լոյս զի տացես լոյս այդմ աշխարհացդ, վերակացու լեր այդմ դառն եւ անծուկ պատահմանդ՝ եւ օգնական. օր ըստ

թարգմանեալ. եւ եւս առաւել, զի կարծեմ թէ լատին բնագիրն եւ ոչ ՚ի քահանայապետական Դիւանս մեծին Հռովմայ գտանի արդ: